## ԽԱՂԱՀՐԱՊԱՐԱԿԻ ՊԱՀԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**20 հունիսի 2022թ.**

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Հենզել և Գրետել» մանկապարտեզ ՀՈԱԿ-ը, այսուհետ՝ «Կողմ 1», ի դեմս տնօրեն Կարինե Մելիքյանի, մի կողմից, և «Ֆորքս Օն Չիլդրեն Նաու, ինկ» ԲԿ հայաստանյան մասնաճյուղը, այսուհետ՝ «Կողմ 2», ի դեմս տնօրեն Անահիտ Քալանթարյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**1.1** Սույն պայմանագրով՝ Կողմ 1-ը պարտավորվում է ընդունել, պահել և բարեկարգել Կողմ 2-ի կողմից իրեն հանձնված «Հենզել և Գրետել» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի վարչական տարածքում տեղակայված խաղահրապարակը: Խաղահրապարակի արտաքին տեսքը և նկարագրությունը սահմանված է սույն պայմանագրի Հավելված 1-ում:

**1.2** Սույն պայմանագրով սահմանված խաղահրապարակի բարեգործական նպատակներով կառուցելու համար Կողմ 1-ը պարտավոր է ապահովել հետևյալ նվազագույն պայմանները՝

1.2.1. «Հենզել և Գրետել» մանկապարտեզ ՀՈԱԿ-ն իր կողմից պարտավորվում է ապահովել սույն պայմանագրի հավելված 1-ում նշված ապրանքների և աշխատանքների ընդհանուր գումարի 10%-ը, որը կազմում է 261.800 (երկու հարյուր վաթսունմեկ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

1.2.2. Խաղահրապարակի տարածքը պատել լվացված ավազով կամ կանաչ խոտածածկով:

1.2.3. Խաղահրապարակի տարածքում տեղադրել նստարաններ, աղբամաններ:

1.2.4. Խաղահրապարակի տարածքում իրականացնել ծառատունկ:

1.2.5. Տեղադրման հաջորդ տարվա գարնան ամիսներին իրականացնել խաղահրապարակի հատակի ծածկի վերանորոգման աշխատանքներ:

**1.3** Խաղահրապարակը տեղադրվում է Ֆորքս օն չիլդրեն նաու ինկ բարեգործական հիմնադրամի կողմից երեխաների բարօրությունը ապահովելու նպատակով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Կողմ 1-ը իրավունք ունի՝**

2.1.1 Բոլոր պահանջների կատարման դեպքում պահանջել շահագործման հանձնել խաղահրապարակը:

**2.2. Կողմ 1-ը պարտավոր է՝**

2.2.1. խաղահրապարակը պահառության ընդունել Կողմ 2-ից՝ խաղահրապարակի տեղադրման պահից.

2.2.2. Խաղահրապարակը պահառության ընդունել «Հենզել և Գրետել» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տարածքում:

2.2.3. Պահատվության հանձնված խաղահրապարակի պահպանվածության ապահովման համար ձեռնարկել օրենքով, նորմատիվ ակտերով, սույն պայմանագրով նախատեսված, ինչպես նաև գործարար շրջանառության սովորույթներին, ներառյալ՝ պահատվության հանձնված ապրանքի հատկություններին համապատասխանող բոլոր միջոցները.

2.2.4. Խաղահրապարակը պահառության ընդունելու ժամանակ Կողմ 2-ի ներկայացուցչի ներկայությամբ զննել այն և վերհանել առկա թերությունները.

2.2.5. Խաղահրապարակը զննելուց հետո Կողմ 2-ի հետ կնքել հանձնման-ընդունման ակտ.

2.2.6. Ապահովել խաղահրապարակի պատշաճ պահպանությունը՝ բարեկարգել, մաքրել և կանաչապատել տարածքը.

**2.3. Կողմ 2-ն իրավունք ունի՝**

2.3.1. Պահանջել Կողմ 1-ից ձեռնարկելու սույն պայմանագրով, ինչպես նաև օրենքներով, այլ իրավական ակտերով նախատեսված միջոցներն խաղահրապարակի պահպանվածությունն ապահովելու համար.

2.3.2. Պահանջել հատուցելու խաղահրապարակին հասցված վնասները՝ վերականգնելու խաղահրապարակի նախնական տեսքը, թեկուզև դրանք հասցվել են ոչ Կողմ 1-ի մեղքով:

2.3.3. Շահագործման չհանձնել խաղահրապարակը և միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կողմ 1-ը չի կատարել սույն Պայմանագրի 1.2. կետով ստանձնած իր պարտավորությունները.

**2.4. Կողմ 2-ը պարտավոր է՝**

2.4.1. Խաղահրապարակը հանձնել շահագործման տեղադրումի պահից սկսած 10 օրվա ընթացքում.

2.4.2. Կողմ 1-ին նախազգուշացնել պահատվության հանձնվող խաղահրապարակի վտանգավոր հատկությունների մասին /դյուրավառ, պայթյունավտանգ և այլն/.

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

**3.1** Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և համարվում է կնքված անորոշ ժամկետով: Պայմանագիրը կարող է լուծվել սույն Պայմանագրով կամ օրենքով նախատեսված այլ հիմքերով:

**3.2** Սույն պայմանագրի հավելված 1-ով սահմանված ապրանքները տրամադրվում են անհատույց:

## 4.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

**4.1** Կողմ 1-ը պատասխանատվություն է կրում պահառության ընդունված ապրանքի կորստի, պակասորդի կամ վնասվածքի համար, եթե չապացուցի, որ կորուստը, պակասորդը կամ վնասվածքը տեղի են ունեցել անհաղթահարելի ուժի հետևանքով:

**4.2** Կողմ 1-ն պարտավոր է Կողմ 2-ին հատուցել ապրանքի կորստի, պակասորդի կամ վնասվածքի հետևանքով պատճառված վնասները:

**4.3** Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծվում են դատական կարգով:

## 7.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագրի բոլոր փոփոխություններն ու լրացումները պետք է կատարվեն գրավոր: Պայմանագիրը պետք է ստորագրած լինեն կողմերի լիազոր ներկայացուցիչները:

7.2 Սույն պայմանագրի լուծման և դադարեցման հիմքերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ:

7.3 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2/երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Հավելված 1

«Հենզել և Գրետել» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի խաղահրապարակի նկարագիր

1. Զսպանակով ճոճանակ 2 տեղանի 1 հատ
2. Պտույտ 1 հատ
3. Ջիփ 1 հատ
4. Վիգվամ 1 հատ
5. Աստրա 2 համալիր 1 հատ
6. Ցուցանակ 1 հատ
7. Ջրուցարան 1 հատ
8. Հին սարքավորումների վերանորոգում

Խաղահրապարակի ընդհանուր արժեքն է 2.618.000 (երկու միլիոն վեց հարյուր տասնութ հազար) ՀՀ դրամ առանց ԱԱՀ:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ԿՈՂՄ 1 | ԿՈՂՄ 2 |
|---|---|
| «Հենզել և Գրետել» մանկապարտեզ ՀՈԱԿ | *« Ֆոքըս Օն Չիլդրեն Նաու,ինկ.»* |
| ՀՎՀՀ 05539904 | ՀՎՀՀ 00130776 |
| Հ/Հ | հ/հ 1570018922880100<br>Ամերիա բանկ ՓԲԸ |
| Շիրակի մարզ, ք. Գյումրի, Խ.Հայրիկի 1. | ք. Երևան, Վ. Համբարձումյան 2, 37 բն. |
| Տնօրեն՝ Կ.Մելիքյան<br><br>_______________<br>*(ստորագրություն)* | *Տնօրեն՝ Ա. Քալանթարյան*<br><br>_______________<br>*(ստորագրություն)* |

# Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 27 | Դեկտեմբեր | 2022 թ. |
| **[4] Առաքման ամսաթիվ** | | |
| 27 | Դեկտեմբեր | 2022 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 5979151376 |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | |
| | |

| Պայմանագիր | |
|---|---|
| [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| | |

**[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)**

2618000 դրամ՝ Տրվում է բարեգործական նպատակներով՝ անհատույց, վճարման ենթակա գումար՝ 261800 դրամ

**[7.1] ՀԴՄ կտրոնի համար**

## Արտադրանք, ապրանք առաքող անձի

| | | |
|---|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 0 1 3 0 7 7 6 | |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 0 1 3 0 7 7 6 / 1 | |
| [10] Անվանումը | «ՖՈՔԸՍ ՕՆ ՉԻԼԴՐԵՆ ՆԱՈՒ, ԻՆԿ.» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ Օտարերկրյա իրավաբանական անձի մասնաճյուղ | |
| [11] Բանկային տվյալները | ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ | N 1570018922880100 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Փ. 2 բՆ. 37 | |
| [13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ք. Երևան Վ Համբարձումյան 2, բն 37 | |
| [14] Լրացուցիչ տվյալներ | | |

## Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի

| | | |
|---|---|---|
| [15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 5 5 3 9 9 0 4 | |
| [16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | | |
| [17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀԵՆՁԵԼ ԵՎ ԳՐԵՏԵԼ- ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (ՀՈԱԿ) | |
| [18] Բանկային տվյալները | | N |
| [19] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ ԳՅՈՒՄՐԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃ. 1-ԻՆ ԹԱՂ. 56 1 | |
| [20] Լրացուցիչ տվյալներ | | |

| | | | |
|---|---|---|---|
| [21] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |
| [22] Մատակարարման (առաքման) եղանակը | | | |
| [23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | Շիրակի մարզ, ք. Գյումրի, Խ.Հայրիկի 1. | | |

**[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը**

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Տարա | Այդ թվում՝ բնապ. հարկ | Այդ թվում՝ ակցիզ. հարկի գումար |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Ջսպանակով ճոճանակ 2 տեղ | հատ | 1 | 152000 | | 152000 | | 0 | |
| 2 | Ջիփ | հատ | 1 | 398000 | | 398000 | | 0 | |
| 3 | Պտույտ Ø 1.5 մ | հատ | 1 | 346000 | | 346000 | | 0 | |
| 4 | Կրկնակի Աստրա | հատ | 1 | 448000 | | 448000 | | 0 | |
| 5 | Վիգվամ | հատ | 1 | 522000 | | 522000 | | 0 | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | Ցուցանակ | հատ | 1 | 98000 | | 98000 | | 0 | |
| 7 | Ջրուցարան | հատ | 1 | 310000 | | 310000 | | 0 | |
| 8 . | Մանկական խաղահրապարակի սարքավորումների վերանորոգում | օր | 1 | 344000 | | 344000 | | 0 | |
| Ընդամենը | | | | | | 2618000 | X | 0 | |

Առաքող՝ OSIKYAN MANE 5609930642
(անունը, ազգանունը)

Ստացող [signature] (անունը, ազգանունը)

27/12/2022 13:10:07

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՀԵՆԶԵԼ ԵՎ ԳՐԵՏԵԼ - ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

N _____________

ք. Գյումրի
Թբիլիսյան խճ.1-ին թաղ. 56/1

<<___03__>> հոկտեմբերի 2023_ թ.

Գյումրի համայնքի ղեկավար
պարոն Վ.Սամսոնյանին

Հարգելի պարոն Սամսոնյան:

Հայտնում ենք Ձեզ, որ <<Հենզել և Գրետել-մսուր մանկապարտեզ>>ՀՈԱԿ-ի /տնօրեն Կ.Մելիքյան/ և <<Ֆորքըս Օն Չիլդրեն Նաու, ինկ>>ԲԿ հայաստանյան մասնաճյուղի/ տնօրեն Ա.Քալանթարյան միջև /20հունիսի 2022 թվական/ կնքվել է խաղահրապարակի տեղադրման պայմանագիր, որի ընդհանուր արժեքը 2 618 000ՀՀ դրամ է /առանց ԱԱՀ/:

Փոխհատուցման ենթակա գումարը 10% է, որը կազմում է 261800 ՀՀ դրամ:

Կից ներկայացնում ենք խաղահրապարակի պահատվության և բարեկարգման պայմանագիրը հաշիվ- վավերագրով:

Տնօրեն Կ:Մելիքյան

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Քարտուղարության բաժին
ՍՏԱՑՎԱԾ Է 03 10 2023 թ.
ԳՐԱՆՑՎԱԾ Է N 21045